ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N << ԵՔ-ԲՄԾՁԲ-18/23-2>>

ք. Երևան 8 փետրվարի 2018 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Գ. Չթրյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 01.04.2015 թվականի թիվ 956-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էլֆոտիս» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գ. Կարապետյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունքունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտել ն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված

N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **2976000** (երկու միլիոն ինը հարյուր յոթանասունվեց հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից

և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Երևանի քաղաքապետարան	«Էլ ֆոտիս» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտի փող. 1	ՀՀ. Արագածոտնի մարզ, գ.
Կենտրոնական գանձապետարան	Կաքավաձոր
ՀՎՀՀ 02593108	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900052476349	Հ/Հ 205002228844
	ՀՎՀՀ 05306022

Գ. Չթրյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Գ. Կարապետոսյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1
« 8 » փետրվարի 2018 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

հրավերով նախատեսված է/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	Ծառայության մատուցման	
						հասցեն	ժամկետը **
	Դավթաշեն վարչական շրջան						
33	92621110/410	Անկախության 27-րդ տարեդարձին նվիրված մարզական խաղեր - Մարզական խաղերը բաղկացած է չորս փուլից, որոնք իր մեջ ներառում է հանդբոլ՝ աղջիկ-տղա, ֆուտբոլ, բասկետբոլ՝ աղջիկ-տղա, վոլեբոլ՝ աղջիկ-տղա, թ/ատլետիկա, սեղանի թենիս, ֆուտ-զալ, լողափնյա վոլեբոլ, բադմինթոն: Միջոցառմանը մասնակցելու համար անհրաժեշտեն 64 հատ մարզահագուստ՝կապույտ, սև, կանաչ, սպիտակ, կարմիր գույների համադրմամբ 38-ից 40 (M և L) չափսի, 60% բամբակյա, 40% սինթետիկ, ցանցկեն աստառով, Դավթաշեն վարչական շրջանի անունը կրող տարբերանշանով: Հագուստի տեսքը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Միջոցառման համար անհրաժեշտ ապահովել մրցավարական սպասարկման անձնակազմ, որի մեջ ներառում են՝1 (մեկ) գլխավոր մրցավար, 9 (ինը) մրցավարներ և 1(մեկ) բժիշկ: Միջոցառմանը մասնակիցների մասնակցությունն ապահովելու համար անհրաժեշտ է 15-20 տեղանոց տրանսպորտային միջոց՝ տեղափոխելու և հետբերելու համար՝ 2008-2010թթ. արտադրության, օդափոխիչ համակարգով և նոր անվադողերով: Միջոցառման կազմակերպման ընթացքը համաձայնեցնել պատվիրատուի հետ: փետրվար-մարտ-ապրիլ-մայիս	դրամ	594000	1	***Դավթաշեն վարչական շրջան***	2018 թվականի մայիս ամիսը ներառյալ
34	92621110/411	ՀՀ Ազգային ժողովի գավաթի խաղարկ. 1-6րդ դասարաններ- Ծառայություն մատուցող	դրամ	396000	1	***Դավթաշեն վարչական շրջան***	2018 թվականի մայիս ամիսը ներառյալ

		կազմակերպությունը պետք է ապահովի ՀՀ Ազգային ժողովի գավաթի խաղարկության կազմակերպման ծառայությունները, որին մասնակցելու են հանրակրթական դպրոցների 1-6 դասարանների աշակերտները: Միջոցառումը բաղկացած է 4 փուլից, անց է կացվում 2015-2016 ուսումնական տարվա շրջանակում: 1-ին փուլ՝ ներդպրոցական, 2-րդ փուլ՝ համայնքային, 3-րդ փուլ՝ քաղաքային եզրափակիչ և 4-րդ փուլ՝ հանրապետական եզրափակիչ: Ազգային ժողովի գավաթի խաղարկությանը մասնակցելու համար անհրաժեշտ է 24 հատ մայկա-շորտիկ՝ կապույտ, կամիր, սպիտակ և սև գույների համադրմամբ 38-ից 40 (S և M) չափսի, 60% բամբակյա, 40% սինթետիկ ցանցկեն աստառով, Դավթաշեն վարչական շրջանի անունը կրող տարբերանշանով: Հագուստի տեսքը համաձայնեցնել պատվիրատուի հետ:					
35	92621110/412	Ս.Գևորգյանի անվան հուշամրցաշար - Միջոցառումը ներառում է հեծանվային սպորտաձև պատանիների, երիտասարդների և մեծահասակների մասնակցությամբ: Մրցաշարի կազմակերպման և անցկացման ծառայություններին համար անհրաժեշտ է ապահովել հետևյալ դրույթները՝ մասնակիցներին Ծուշի տեղափոխելու և հետբերելու նպատակով անհրաժեշտ է մեկ ավտոբուս՝ համալրված քառասուն տեղով: Մրցաշարի կազմակերպման և անցկացման համար անհրաժեշտ է ապահովել մասնակից մարզիկներին մրցանակային ֆոնդով, մասնավորապես՝ պատվոգրեր՝ 10 հատ, գավաթներ՝ 4 հատ, և հուշանվերներ, շապիկներ՝ բամբակյա 50 հատ համարակալված չափը 36-50, որոնք հետներառում է գլխարկ: Հագուստի տեսքը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Միջոցառման կազմակերպման ընթացքը համաձայնեցնել պատվիրատուի հետ: մայիս	դրամ	396000	1	***Դավթաշեն վարչական շրջան***	2018 թվականի մայիս ամիսը ներառյալ
36	92621110/413	Մարզահամերգային տոնահանդես՝ մանկապարտեզների սաների մասնակցությամբ- Ծառայությունը ներառում է	դրամ	396000	1	***Դավթաշեն վարչական շրջան***	2018 թվականի հունիս ամիսը ներառյալ

		երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված մարզահամերգային տոնահանդես, որի կազմակերպման համար անհրաժեշտ է ապահովել ձայնային և հնչյունային տեխնիկա /5-6 կվատ/ հզորությամբ՝ նախատեսված բացօթյա հնչողություն ապահովելու համար: Վարչական շրջանի 5 մանկապարտեզից ընդգրկել 10-ական երեխաներ՝ /հինգ տղա, հինգ աղջիկ, 1 մանկավարժ և 1 ծնող՝ անկախ սեռից/ ընդամենը 50 երեխա: Միջոցառումն իր մեջ ներառում է սպորտլանդիա՝ փոխանցումավազք արգելքների հաղթահարումով, նետումներ նշակետին, խաղային փոխանցումավազք, մանկական եռանիվ հեծանիվի վարում: Մասնակից 50 երեխաների տրամադրել նվերներ՝ 25 տղայի ֆուտբոլի գնդակներ, 25 աղջիկների փափուկ խաղալիք: Մրցավարական սպասարկման անձնակազմը ներառում է 4 մրցավար: Միջոցառման կազմակերպման ընթացքը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Մայիս-հունիս					
37	92621110/414	«Առողջ սերունդ պաշտպանված հայրենիք» բակային փառատոն- «Առողջ սերունդ պաշտպանված հայրենիք» բակային փառատոնը բաղկացած է երկու փուլից, որն իր մեջ ներառում է ֆուտբոլ, վոլեբոլ, բասկետբոլ, հանդբոլ, շախմատ, շաշկի և մականախաղ: Միջոցառման մասնակիցները պետք է ապահովվեն 51 հատ մարզաշապիկ կիսավարտիքով (տարբեր գույների համադրմամբ՝ համաձայնեցնելով պատվիրատուի հետ)՝ 12 հատ Մարզաշապիկ կիսավարտիք բասկետբոլի ներքևի մասը և վերնամասը սպիտակ կիսաթև և սուր վզով, համարակալված 4-15, 44-46 չափսի, բաղադրությունը՝ 60% բամբակյա, 40% սինթետիկ 15 հատ մարզաշապիկ կիսավարտիք ֆուտբոլի ներքևի մասը և վերնամասը կարմիր կիսաթև և սուր վզով, համարակալված 1-15, 42-44չ չափսի, բաղադրությունը՝ 60% բամբակ, 40% սինթետիկ, 12 հատ Մարզաշապիկ կիսավարտիք հանդբոլի ներքևի մասը և վերնամասը	դրամ	696000	1	***Դավթաշեն վարչական շրջան***	2018 թվականի հուլիս ամիսը ներառյալ

		կապույտ,կիսաթև և սուր վզով, համարակալված 1-12, 42-44 չափսի, բաղադրությունը՝ 60% բամբակ 40% սինթետիկ 12 հատ Մարզաշապիկ կիսավարտիք վոլեյբոլի ներքևի մասը և վերնամասը կանաչ, կիսաթև և սուր վզով համարակալված 1-12, 42-44 չափսի, բաղադրությունը՝ 60% բամբակյա 40% սինթետիկ Միջոցառման համար անհրաժեշտ է ապահովել մրցավարական սպասարկման անձնակազմով, որի մեջ ներառում են՝1 (մեկ) գլխավոր մրցավար, 1 (մեկ) քարտուղար, 8 (ութ) մրցավարներ և 1 (մեկ) բժիշկ: Միջոցառմանը մասնակցելու համար անհրաժեշտ է 15-20 տեղանոց տրանսպորտային միջոց՝ երեխաներին պատվիրատուի նշված վայրից տեղափոխելու և հետբերելու համար, 2008-2010թթ. արտադրության, օդափոխիչ համակարգով և նոր անվադողերով: Միջոցառման կազմակերպման ընթացքը համաձայնեցնել պատվիրատուի հետ: հունիս-հուլիս					
38	92621110/415	ՀՀ Նախագահի լավագույն մարզական ընտանիք -ՀՀ Նախագահի լավագույն մարզական ընտանիք մրցույթը բաղկացած է չորս տարիքային խմբերից, որը իր մեջ ներառում է յոթ մարզաձև: Միջոցառմանը մասնակցելու համար անհրաժեշտ է մարզահագուստ՝ ծնողների (24 հատ) և երեխաների (12 հատ), ընդհանուր՝ 36 կոմպլեկտ: Ծնողների մարզահագուստի նկարագրությունը՝երկարաթև վերնամասով, սուր վզով թավշյա գործվածքից, ցանցկեն աստառով, սև և սպիտակ գույների համադրությամբ: Ձևավորումը համաձայնեցնել պատվիրատուի հետ M, L, XL, XXL չափսի, թիկունքի մասում գրված «Դավթաշեն» (3սմ բարձրությամբ և 5մմ հաստության): Երեխաների մարզահագուստի նկարագրությունը՝երկարաթև վերնամասով, սուր վզով թավշյա գործվածքից, ցանցկեն աստառով, սև և նարնջագույն գույների համադրությամբ: Ձևավորումը համաձայնեցնել պատվիրատուի հետ: S, M, չափսի, թիկունքի մասը գրված «Դավթաշեն» (3սմ բարձրությամբ և 5մմ	դրամ	300000	1	***Դավթաշեն վարչական շրջան***	2018 թվականի հուլիս ամիսը ներառյալ

		հաստության), սպիտակ գույնի տառերով: Հունիս-հուլիս					
39	92621110/417	«Նախազորակոչային և զորակոչային տարիքի» երիտասարդների հանրապետական խաղեր- Ռազմամարզական խաղերը բաղկացած են չորս փուլից, որոնք իր մեջ ներառում է վեց մարզաձև: Ծրագիրը տրամադրում է պատվիրատուն: Միջոցառմանը մասնակցելու համար անհրաժեշտ է մարզահագուստ 18 հատ: Մարզահագուստի նկարագրությունը՝ երկարաթև վերնամասով, սուր վզով, թավշյա գործվածքից, ցանցկեն աստառով, սև և սպիտակ գույների համադրությամբ: Ձևավորումը համաձայնեցնել պատվիրատուի հետ, M, L, XL, չափսի, թիկունքի մասում գրված «Դավթաշեն» (3սմ բարձրությամբ և 5մմ հաստության), սպիտակ գույնի տառերով: Միջոցառման կազմակերպման ընթացքը համաձայնեցնել պատվիրատուի հետ: հոկտեմբեր-նոյեմբեր	դրամ	198000	1	***Դավթաշեն վարչական շրջան***	2018 թվականի նոյեմբեր ամիսը ներառյալ

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02593108
Հ/Հ 900052476349

Գ. Չթրյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

Կատարող
«Էլ ֆոտիս» ՍՊԸ
ՀՀ. Արագածոտնի մարզ, գ.
Կաքավաձոր
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 205002228844
ՀՎՀՀ 05306022

Գ. Կարապետյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 2
« 8 » « փետրվարի » 2018թ.կնքված
ԵՔ-ԲՄԾՁԲ-18/23-2 գնման պայմանագրի հավելված

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2018 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1	Սպորտային միջոցառումների կազմակերպում		600000	600000	2400000	2400000	2400000	2800000	2800000	2800000	2976000	2976000	2976000	2976000
	Ընդամենը		600000	600000	2400000	2400000	2400000	2800000	2800000	2800000	2976000	2976000	2976000	2976000

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են ածողական կարգով:

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
Ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02593108
Հ/Հ 900052476349

Գ.Չթրյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

Կատարող
«Էլ ֆոտիս» ՍՊԸ
ՀՀ. Արագածոտնի մարզ, գ.
Կաքավաձոր
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 205002228844
ՀՎՀՀ 05306022

Գ.Կարապետոսյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 3
« » 2018 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս _____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 2018 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 10
«ԵՔ-ԲՄԾՁԲ-18/23-2» *ծածկագրով*
բաց մրցույթի հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք.Երևան «8» փետրվարի 2018 թ.**

«Էլ ֆոտիս» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գ. Կարապետոսյանի /անձնագիր AN 0408454 տրվ.009-ի կողմից 15.03.2013 թ/, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարանի* (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից
կազմակերպված «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/23-2»* ծածկագրով գնման ընթացակարգին:

Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.2 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.3Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.4 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.5 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱԲՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«Էլ ֆոտիս» ՍՊԸ
ՀՀ. Արագածոտնի մարզ, գ. Կաքավաձոր
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 205002228844
ՀԿՀՀ 05306022

Գ. Կարապետոսյան----------
(ստորագրություն)
Կ.Տ

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[2] N**

(պայմանագրի կատարման ապահովում)

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___ թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ «Էլ Ֆոտիս» ՍՊԸ

4. Վճարողի բանկը՝ «ԻնեկոԲանկ» ՓԲԸ

5. Վճարողի հաշվի համարը՝ Հ/Հ 205002228844

6. Վճարողի ՀՎՀՀ 05306022

7. Վճարողի ՀԾՀ՝

8. Շահառու՝ Երևանի քաղաքապետարան

9. Շահառուի ՀՎՀՀ՝ 02593108

10. Շահառուի բանկը՝ Կենտրոնական գանձապետարան

11. Շահառուի հաշվի համարը /հշ.N/900015211429

12. Գումարը թվերով և բառերով՝ 297600 /երկու հարյուր իննսունյոթ հազար վեց հարյուր

13. Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD

14. Գործարքի /վճարման/ նպատակը՝ *(պայմանագրի կատարման ապահովում)*

15. Պայմանագրի ծածկագիրը՝՝ «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/23-2»

16. Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը 17. կից՝--- էջ

19.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 19.բ. Կ.Տ.	18.ա. Վճարողի ստորագրությունները /_____/ /_____/ 18.բ. Կ.Տ.
Կատարված է շահառուի բանկի կողմից 20.ա. /_____/ /ստորագրություն/ 20.բ. Կ.Տ. "___" ___ 20___ թ.	Կատարված է վճարողի բանկի կողմից 21.ա. /_____/ /ստորագրություն 21.բ. Կ.Տ. 22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ

[2] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*